«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Բաղդասարյան Ս.Հ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ ՀՀ Իրավապահ մարմինների համակարգ

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. **Դասընթացի անոտացիան**

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացն այն հիմնական իրավաբանական առարկաներից է, որն ուսումնասիրվու է բուհերի իրավագիտության ֆակուլտետներում: Այս դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում մինչև հիմնական իրավաբանական դասընթացներն ուսումնասիրելը ծանոթանալ ՀՀ դատարանների և իրավապահ մարմինների կազմակերպմանը, դրանց համակարգին և կառուցվածքին, միմյանց և այլ մարմինների հետ ունեցած փոխհարաբերություններին: Սույն դասընթացի շրջանակներում դատարանների և իրավապահպան մարմինների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար վերլուծության են ենթարկվում նաև արդարադատության սկզբունքները, որոնք իրենց օրենսդրական ամրապնդումն են ստացել ՀՀ Սահմանադրությունում և առավել մանրամասն այդ մարմինների կազմակերպումը և գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերում: Դասընթացում հատուկ ուշադրություն է հատկացվում դատարանի և իրավապահ մարմինների համակարգին, կառուցվածքին, կազմին, դրանց կազմավորմանը, դատավորներին, դատախազներին, քննիչներին և փաստաբաններին ներկայացվող պահանջներին և նրանց իրավական կարգավիճակին: «ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացն ունի իր համակարգը: Դասընթացում ուսումնասիրվող հարցերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ ընդհանուր նշանակություն ունեցող հարցերի և դատական մարմիններին ու այս կամ այն իրավապահպան մարմնին վերաբերող հարցերի:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները**

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացի հիմնական խնդիրներն են՝

- ապահովել ուսանողների առավելագույն ներգրավածությունը կրթական գործընթացին.
- օգնել ուսանողներին հասկանալ ՀՀ իրավապահ մարմինների համակարգը և դատական համակարգը, առանձնահատկությունները և կարգավորման առարկան.
- ուսումնասիրել դատարանակազմությունը, դատական իշխանության գործունեության և կազմակերպման հիմքում ընկած սկզբունքներն ու առանձնահատկությունները, գործառույթները,
- ուսումնասիրել ՀՀ դատախազության, նախաքննություն իրականացնող մարմինների, ազգային անվտանգության մարմինների, բարձրագույն դատական խորհրդի, դատական դեպարտամենտի, նոտարիատի, հարկադիր

կատարումն ապահովող ծառայության համակարգը, կառուցվածքը և գործառույթները,

- ուսումնասիրել ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները, կառուցվածքը, կարգավիճակը,
- ուսումնասիրել փաստաբանությունը ՀՀ-ում, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը,
- ձևավորել ուսանողների մոտ համալիր գիտելիքներ ՀՀ իրավապահպան մարմինների և դատարանների վերաբերյալ:

3. Դասընթացի օբյեկտը և առարկան

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում են այն օրենսդրական ակտերը, որոնք կարգավորում են արդարադատության և իրավապահ մարմինների համակարգը կազմող մարմինների կազմակերպումն ու գործունեությունը, դրանց իրավահարաբերությունը կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացի առարկան է՝ դատարանների, դատախազության, ոստիկանության, հետաքննության և նախաքննության մարմինների, ազգային անվտանգության մարմինների, նոտարիատի, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, փաստաբանների պալատի, մարդու իրավունքնորի պաշտպանի կազմակերպման և գործունեության հարցերը:

4. Դասընթացի մուտքային պահանջները

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, սահմանադրական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

5. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

- Իրավապահ և դատական համակարգերի կառուցվածքի, գործառույթների և փոխգործակցության վերաբերյալ գիտելիքներ:

- Իրավահարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտերի բովանդակության և կիրառման առանձնահատկությունների իմացություն։
- Դատական պրակտիկայի և պետական մարմինների պաշտոնական մեկնաբանությունների նշանակության և կիրառման սկզբունքների իմացություն։
- Իրավական դիրքորոշման ձևավորման և իրավական շահերի պաշտպանության հիմնական մեխանիզմների իմացություն։

Հմտությունները՝

Գիտելիքի կիրառման հմտությունները՝

- Որոշել իրավապահ և դատական համակարգերում առաջացող խնդիրների էությունը։
- Կողմնորոշվել դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում։
- Ներկայացնել հիմնավորված իրավական դիրքորոշում՝ հենվելով նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի և պետական մարմինների բացատրական նյութերի վրա։
- Պաշտպանել իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը։

Ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված իրավական գիտելիքները։
- Կատարել իրավական բնույթի վիճահարույց իրավիճակների վերլուծություն և առաջարկել հիմնավորված լուծումներ։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն ուսումնասիրել և կիրառել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան և պետական մարմինների բացատրական նյութերը։
- Վերլուծել իրավունքի աղբյուր հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը։
- Կատարել տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն։
- Աշխատել իրավական փաստաթղթերի հետ՝ պահպանելով մասնագիտական պատասխանատվության և իրավական էթիկայի պահանջները։

6. **Դասավանդման եղանակները և մեթոդները։**

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով։ Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները

տվյալ ոլորտում:

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«ՀՀ իրավապահ մարմինների համակարգ դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

7. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է բակալավրի ուսումնական պլանի «Հիմնական մասում»՝ 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-ին ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	108
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1. Դասախոսություններ	16
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	76
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. ՀՀ իրավապահ մարմինների համակարգը դասընթացի առարկան, համակարգը և աղբյուրները:	4	2	2
Թեմա 2. Դատական իշխանություն Դատական իշխանության հասկացությունը, հատկանիշները Դատարանը՝ որպես դատական իշխանության մարմին Արդարադատություն. Հասկացությունը և բնորոշ գծերը: Դատական իշխանության	3	2	1
կազմակերպման և գործունեության սկզբունքները, համակարգը, տեսակները			
Թեմա 3. Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, կազմը և կազմակվորման կարգը Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը: Դատավորների ընդհանուր ժողովը, Դատական դեպարտամենտի կառուցվածքը և լիազորությունները:	3	2	1
Թեմա 4. Դատավորի կարգավիճակը Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները և դատավորի նշանակման ընթացակարգը	2	1	1

Թեմա 5. Դատավորի անկախության երաշխիքները Դատավորի անկախության երաշխիքներ հասկացությունը և նշանակությունը Դատավորի անկախության առանձին երաշխիքները Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը Դատավորի լիազորությունները դադարեցնելու և դադարելու հիմքերն ու ընթացակարգը Դատավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը։ Դատավորի վարքագծի կանոնները	2	1	1
Թեմա 6. Հայաստանի Հանրապետության դատական համակարգը Դատական համակարգի կազմավորման սկզբունքները ՀՀ դատական համակարգ հասկացությունը և հատկանիշները Առաջին ատյանի դատարաններ	2	1	1

Ընդհանուր իրավասության դատարաններ Մասնագիտացված դատարաններ Վերաքննիչ դատարաններ Վճռաբեկ դատարան։			
Թեմա 7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան ՀՀ Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում ՀՀ Սահմանադրական դատարանում վարույթի սկզբունքները Սահմանադրական դատարանի կազմը, դատավորների կարգավիճակը և գործունեության կազմակերպումը Սահմանադրական դատարանի լիազորությունները։	4	2	2

Թեմա 8. Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում Փաստաբանության էությունը, խնդիրները, կազմակերպման և գործունեության սկզբունքները Փաստաբանների պալատը և դրա մարմինները Փաստաբանական գործունեության հասկացությունը, ուղղությունները և արտոնագրումը Փաստաբանի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը:	2	1	1
Թեմա 9. Հայաստանի Հանրապետության դատախազությունը ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում Դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքները, մարմինների համակարգը և կառուցվածքը Դատախազության մարմինների կազմավորումը Դատախազության լիազորությունների	2	1	1

ընդհանուր բնութագիրը։			
Թեմա 10. ՀՀ ՆԳՆ, Ոստիկանությունը։ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը։ ՀՀ նախնական քննության մարմինները ։	2	1	1
Թեմա 11. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը։	2	1	1
Թեմա 12. ՀՀ նոտարիատը։	2	1	1
Թեմա 13. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը։	2	1	1
Ընդամենը	32	16	16

8. Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. ՀՀ իրավապահ մարմինների համակարգը դասընթացի առարկան, համակարգը և աղբյուրները

Թեմա 2. Դատական իշխանություն։ Դատական իշխանության հասկացությունը, հատկանիշները։ Դատարանը՝ որպես դատական իշխանության մարմին։ Արդարադատություն։ Հասկացությունը և բնորոշ գծերը Դատական իշխանության կազմակերպման և գործունեության սկզբունքները, համակարգը, տեսակները

Թեմա 3. Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, կազմը և կազմակվորման կարգը։ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը։ Դատավորների ընդհանուր ժողովը, Դատական դեպարտամենտի կառուցվածքը և լիազորությունները

Թեմա 4. Դատավորի կարգավիճակը։ Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը։ Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները և դատավորի նշանակման ընթացակարգը

Թեմա 5. Դատավորի անկախության երաշխիքները։ Դատավորի անկախության երաշխիքներ հասկացությունը և նշանակությունը։ Դատավորի անկախության առանձին երաշխիքները։ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը։ Դատավորի լիազորությունները

դադարեցնելու և դադարելու հիմքերն ու ընթացակարգը: Դատավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը: Դատավորի վարքագծի կանոնները

Թեմա 6. Հայաստանի Հանրապետության դատական համակարգը: Դատական համակարգի կազմավորման սկզբունքները: ՀՀ դատական համակարգ հասկացությունը և հատկանիշները: Առաջին ատյանի դատարաններ. Ընդհանուր իրավասության դատարաններ, Մասնագիտացված դատարաններ: Վերաքննիչ դատարաններ:Վճռաբեկ դատարան

Թեմա 7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան: ՀՀ Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում: ՀՀ Սահմանադրական դատարանում վարույթի սկզբունքները: Սահմանադրական դատարանի կազմը, դատավորների կարգավիճակը և գործունեության: կազմակերպումը: Սահմանադրական դատարանի լիազորությունները

Թեմա 8. Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում: Փաստաբանության էությունը, խնդիրները, կազմակերպման և գործունեության սկզբունքները: Փաստաբանների պալատը և դրա մարմինները: Փաստաբանական գործունեության հասկացությունը, ուղղությունները և արտոնագրումը: Փաստաբանի: իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները: Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը

Թեմա 9. Հայաստանի Հանրապետության դատախազությունը: ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում: Դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքները, մարմինների համակարգը և կառուցվածքը: Դատախազության մարմինների կազմավորումը: Դատախազության լիազորությունների ընդհանուր բնութագիրը
Թեմա 10. ՀՀ ՆԳՆ, Ոստիկանությունը: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: ՀՀ նախնական քննության մարմինները

Թեմա 11. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը

Թեմա 12. ՀՀ նոտարիատը

Թեմա 13. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Ս. Ա. Դիլբանդյան, Ա. Ռ. Հարությունյան, Գ. Ս. Ղազինյան, Հ.Հ. Ղուկասյան:
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը, Ս. Ա. Դիլբանդյան, Գ. Ս. Ղազինյան:
3. ՀՀ Սահմանադրություն:
4. ՀՀ սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարանի մասին
5. Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենք:
6. ՀՀ դատական օրենսգիրք հհ սահմանադրական օրենք
7. ՀՀ քրեական օրենսգիրք:
8. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
9. ՀՀ օրենքը դատախազության մասին:
10. ՀՀ օրենքը փաստաբանության մասին
11. ՀՀ օրենքը նոտարիատի մասին
12. ՀՀ օրենքը ազգային անվտանգության մարմինների մասին
13. ՀՀ օրենքը հհ քննչական կոմիտեի մասին
14. ՀՀ օրենքը դատական ակտերի հարկադիր կատարման մասին

Էլեկտրոնային ռեսուրսներ՝

1. https://www.arlis.am/
2. https://www.irtek.am
3. https://datalex.am
4. http://www.parliament.am
5. https://court.am
6. https://www.concourt.am
7. https://cesa.am
8. https://www.advocates.am
9. https://www.prosecutor.am
10. https://www.gov.am

9. **Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար**

Հարցաշար՝

1. ՀՀ իրավապահ մարմինների համակարգը դասընթացի առարկան, համակարգը և աղբյուրները
2. Դատական իշխանություն

3. Դատական իշխանության հասկացությունը, հատկանիշները
4. Դատարանը՝ որպես դատական իշխանության մարմին
5. Արդարադատություն. Հասկացությունը և բնորոշ գծերը
6. Դատական իշխանության կազմակերպման և գործունեության սկզբունքները, համակարգը, տեսակները
7. Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, կազմը և կազմակվորման կարգը
8. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը
9. Դատավորների ընդհանուր ժողովը
10. Դատական դեպարտամենտի կառուցվածքը և լիազորությունները
11. Դատավորի կարգավիճակը
12. Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը
13. Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները և դատավորի նշանակման ընթացակարգը
14. Դատավորի անկախության երաշխիքները
15. Դատավորի անկախության երաշխիքներ հասկացությունը և նշանակությունը
16. Դատավորի անկախության առանձին երաշխիքները
17. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը
18. Դատավորի լիազորությունները դադարեցնելու և դադարելու հիմքերն ու ընթացակարգը
19. Դատավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը
20. Դատավորի վարքագծի կանոնները
21. Հայաստանի Հանրապետության դատական համակարգը
22. Դատական համակարգի կազմավորման սկզբունքները
23. ՀՀ դատական համակարգ հասկացությունը և հատկանիշները
24. Առաջին ատյանի դատարաններ
25. Ընդհանուր իրավասության դատարաններ
26. Մասնագիտացված դատարաններ
27. Վերաքննիչ դատարաններ
28. Վճռաբեկ դատարան
29. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան
30. ՀՀ Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում

31. ՀՀ Սահմանադրական դատարանում վարույթի սկզբունքները
32. Սահմանադրական դատարանի կազմը, դատավորների կարգավիճակը և գործունեության կազմակերպումը
33. Սահմանադրական դատարանի լիազորությունները
34. Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում
35. Փաստաբանության էությունը, խնդիրները, կազմակերպման և գործունեության սկզբունքները
36. Փաստաբանների պալատը և դրա մարմինները
37. Փաստաբանական գործունեության հասկացությունը, ուղղությունները և արտոնագրումը
38. Փաստաբանի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները
39. Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը
40. Հայաստանի Հանրապետության դատախազությունը
41. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում
42. Դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքները, մարմինների համակարգը և կառուցվածքը
43. Դատախազության մարմինների կազմավորումը
44. Դատախազության լիազորությունների ընդհանուր բնութագիրը
45. ՀՀ ոստիկանությունը
46. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը
47. ՀՀ նախնական քննության մարմինները
48. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը
49. ՀՀ նոտարիատը
50. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը

10. **Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:**

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելինքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Գնահատականով ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելինքերի արդյունքում: